Այն խոնարհ ինքնագիտակցութիւնը, որ—սա մի շնորհք է, որ ես ապրում եմ օր օրի վերայ—մարդկանց միմեանց մոտեցնում է, խաղաղութեամբ վերջացնում նոցա մէջ եղած տարբերութիւններն ու հակառակախօսութիւնները։ Պարծենկոտութիւնը և ինքնարդարացումը ստեղծում են մի անջրպետ մարդկանց մէջ։

Զգուշացիր փարիսեցիների խմորից, ինչպէս կորնտաբեր ժանտախտից և վերցրու քեզ մաքսաւորին օրինակ։ Ճանաչիր քո պակասութիւններն ու մեղքերը, որոնցից իրաւ դուռ ապատ չես, ծեծիր ցաւագին կուրծքդ և դու կը սովորես ներողամտութեամբ նայել ուրիշների վերայ, կը մոռանաս անգթօրէն դատել ու դատապարտել, քո թոյլ վիճակիդ զգացնել կտաս եղբօրդ անկեալ դրութիւնը և որտեղ որ դու պիտի պատժես, գործ կը դնես քաղցրութիւն։ Կը լինես բարեացակամ, ողորմածութեան և խաղաղասիրութեան, հաշտութեան և ներման, և փոխանակ ուրիշների մոլորութեան վերայ չարանիւթ ուրախանալու, դոքա կլինին քեզ համար մի խթան նոցա օգնելու համար։ Այսպիսի մի համեստ, տաք և քրիստոնէի սիրտ ես կրում քո մէջ, ո՞վ մարդ, թէ դու սառն ես ու սիրուց զուրկ, ինչպէս փարիսեցին։ Թող բացուին քո աչքերդ քեզ համար և քեզ դէպի խոնարհութիւն ու հեզութիւն առաջնորդեն։ Ահա այս է ճանապարհը դէպի Աստուծոյ շնորհքը և դէպի եղբայրների սէրը։

Գերմ. բարգ. Ա. Վ.

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Այս տարի սովորական հանդիսաւորութեամբ կատարուեց կաթողիկէ՝ ս. Էջմիածնի տօնը։ Պատարագի սկզբին ծերունազարդ Վեհափառ Հայրապետան ամբողջ միաբանութեան գլուխն անցած իջաւ տաճարը և սկսուեց

հանդիսաւոր պատարագ։ Պատարագիչ էր միաբանութեանս ներկայ եպիսկոպոսներից աւագագոյնը՝ Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանը։ Երգում էր Կոմիտաս վարդապետի քառաձայն խումբն արտասովոր ոգևորութեամբ։ Պատարագի վերջում տեղի ունեցաւ հայրապետական մաղթանք, Վեհափառի աջն առնելու (համբուրելու) սովորական արարողութիւնը և ապա այս տարուայ ճեմարանաւարտ սաները հոգեհանգիստ կատարել տուին մեծ բարերար և մեծագործ Գէորգ IV կաթողիկոսի շիրմի վրայ։ Պատարագից յետոյ սեղանատուն հրաւիրուեցին ներկայ եղող բազմաթիւ պատուաւոր հիւրերն՝—արք և կանայք առհասարակ։ Թէև շատ մեծ բազմութիւն չէր եկել այս տարի՝ մանաւանդ գիւղերից, որովհետև աշխատանքի ժամանակն էր, բայց դրա փոխարէն նկատելի էր մի ընդհանուր տրամադրութիւն։ Սեղանատանը խօսուեցան բաժակաճառեր, որոնցից յետոյ երգուեցին պատշաճաւոր շարականներ և երգեր։ Ուխտաւորներն ու հիւրերը մեկնեցին քաղցր տպաւորութեան տակ, ամուր կապելով իրենց սրտերն ու զգացմունքները դարերից ի վեր պաշտելի արքութեան հետ։

Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՕՆԸ ՕՇԱԿԱՆ ԳԻՒՂՈՒՄ։

Կան սուրբեր և նրանց համար սահմանուած տօներ, որոնք անողոք ժամանակի շնորհիւ, շնորհիւ մարդկային գիտակցութեան և խիստ քննադատութեան, նսեմանում և համարեա մոռացութեան են տրուում։ Բայց կան և այնպիսիք, որոնց կատարած գործի մեծութիւնն ըմբռնելու համար հարկաւոր է լոյս և որքան մեծանում է ժողովրդի գիտակցութիւնն, այնքան աւելի հանդիսաւոր են դառնում այդպիսի նշանաւոր մշակների գործերը և հետզհետէ արժանաւոր վայելչութեամբ տօնւում նրանց յիշատակը։